ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ 1970-1981 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա. Մ.

Ինչպես Եգիպտոսի ողջ պատմական ընթացքի, այնպես էլ եգիպտահայերի կյանքի ու գործունեության համար շրջադարձային փուլ էին Անվար ալ-Սադաթի նախագահության տարիները (1970-1981): Վերջինիս կողմից Եգիպտոսի պատմության ամենաարմատական փոփոխությունը Իսրայելի հետ միակողմանի *(արաբական աշխարհից զատ)* խաղաղության հասնելն էր, ինչն ամրապնդվեց Քեմփ-Դևիդի՝ 1978 թ. սեպտեմբերի 17-ի համաձայնագրով[1]: Պատմագրության մեջ Իսրայելի հետ Եգիպտոսի համաձայնության գալու սկիզբն ընդունված է համարել 1977 թ. նոյեմբերի 19-ը, երբ Սադաթը կատարեց իր հայտնի այցելությունը Երուսաղեմ[2]: Այս այցելությամբ էլ սկսվեց արաբական աշխարհում Եգիպտոսի «մեկուսացման» շրջանը: Նա համոզված էր՝ մերձավորարևելյան հակամարտության կարգավորման խաղաքարտերի 99 տոկոսը ԱՄՆ-ի ձեռքին էր[3]: ԱՄՆ-ի հետ համագործակցելու Սադաթի պատրաստակամությունը ավելի ակնհայտ դարձավ 1973 թ. արաբաիսրայելյան չորրորդ պատերազմից հետո[4], երբ արաբական աշխարհը և Իսրայելը հայտնվեցին աշխարհաքաղաքական, ռազմական, տնտեսական և բարոյահոգեբանական միանգամայն նոր իրավիճակում: Ակնհայտ դարձան արաբական երկրներում առկա սոցիալդասակարգային երկփեղկվածությունը և դրա հետեվանքով առաջացած բևեռացումը: Եգիպտոսի՝ արաբաիսրայելյան հակամարտությունից դուրս գալու պատրաստակամությունը պայմանավորված էր 1970-ականների կեսին եգիպտական հասարակության սոցիալ-քաղաքական կառուցվածքում տեղի ունեցող լուրջ փոփոխություններով[5]: Նախագահ Գամալ Աբդել Նասերի մահից հետո (1970 թ.) երկրի նոր ղեկավարությունը շրջադարձ կատարեց դեպի կապիտալիստական զարգացում, որի հետևանքով եգիպտական բուրժուազիան, որը ձգտում էր արևմտյան երկրների հետ բազմակողմանի հարաբերությունների հաստատմանը, վերականգնեց իր դիրքերը [6]:

---

[1] **Կարապետյան Ռ.,** Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Ե., 2003, էջ 220, **" الاسبوع العربي" دسمبر 1977، "السفير" 25 نفمبر 1977**

[2] زيارة ألسادات لإسرائيل-وثائق وتعليقات إسرائيلية. بيروت، 1978، ص 30.

[3] **Князев А. Г.,** *Египет после Насера (1970-1981 гг.), М., 1986, с. 127.*

[4] **Սարաջյան Պ. Հ.,** 1973 թ. արաբա-իսրայելյան պատերազմը և արաբական առաջադիմական ուժերի դիրքորոշումը (Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, h, 9, Ե. 1978, էջ 305):

[5] **Владимиров В. В.,** *Политика “открытых дверей” в Египте и местная буржуазия (Народы Азии и Африки, 1982, N 2, с. 25).*

[6] **Князев А. Г.,** *Внутриполитическое и идеологическое развитие в посленасеровском Египте (Азия и Африка сегодня, 1984, N 4, с. 1).*

Եգիպտահայերի՝ վերը նշված արտագաղթը քիչ թե շատ կանխվել է Սադաթի հռչակած «բաց դռների» քաղաքականությամբ, որը հնարավորություն է տվել գործարար մարդկանց, այդ թվում՝ հայերին, ինչ-որ չափով կայունացնելու իրենց տնտեսական դրությունը: 1970-ականի սկզբին եգիպտահայերի ստույգ թիվը դժվար է նշել, ինչի մասին վկայում է առաջնորդական տեղապահ Զավեն եպ. Չինչինյանը «Մեսաժե» թերթին տված իր հարցազրույցում՝ նշելով, որ այն մոտավորապես 15-20 հազար է[7]: Մեկ այլ տեղ նշվում է, որ 1974 թ. Եգիպտոսում հայերի թիվը 10 հազարից մի փոքր ավելի է[8]: Եգիպտոսի առաջնորդի հոգևոր հովանու ներքո էին գործում նաև Սուդանի և Եթովպիայի թեմերը: Համայնքային կյանքի «խավարումը» կանխելու համար մի շարք քայլեր էին ձեռնարկվում, ներառյալ՝ քաջալերվում էին համայնքի անդամների հաճախակի այցելությունները մայր հայրենիք, ինչպես նաև կոչ էր արվում հայ երիտասարդներին բարձրագույն ուսումը շարունակել Հայաստանի համալսարաններում: «Արև» թերթն ընդգծում էր մարզական միությունների կողմից սկաուտական և երիտասարդական խմբերով դեպի հայրենի գեղատեսիլ դաշտավայրերն ու լեռները արշավներ, ինչպես նաև եգիպտահայ հիմնադրամների միջոցով հանդեսներ ու փառատոներ կազմակերպելով՝ նոր սերնդի մեջ ազգային-հայրենասիրական զգացումները միշտ վառ պահելու անհրաժեշտությունը[9]: Հաջորդ քայլը համայնքի ղեկավարությունը տեսնում էր ծեր և միևնույն ժամանակ միայնակ մնացած ազգայիններին համոզելու մեջ՝ հետմահու ժառանգությունը կտակել ի նպաստ ազգային հաստատությունների, մշակութային օջախների և հայ մամուլի, որպեսզի հաղթահարվեր համայնքի նեղ կացությունը, ինչը կօգներ եգիպտահայ համայնքը փրկել քանակական անկումից: Մեկ այլ եգիպտահայ պարբերական՝ «Հուսաբերը» (դաշնակցության օրաթերթ), նույնպես մտահոգ լինելով հայերի շարունակական մեկնումներով, որը նշանակալի չափերով նվազեցնում էր եգիպտահայ գաղութի բնակչության քանակը, պարտավորեցնում էր յուրաքանչյուր եգիպտահայի՝ թեմական ընտրությունների ժամանակ նախապատվությունը տալ խառն ընտրական ցանկին, որպեսզի լիարժեք համագործակցության շնորհիվ գաղութը փրկվի վերահաս աղետից[10]: Համայնք-հայրենիք հարաբերությունների է՛լ ավելի բարելավմանն էր ուղղված 1972 թ. հունվարին Խորհրդային Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանի բարձրակարգ ընդունելությունը եգիպտահայ համայնքի կողմից: Նա Կահիրե էր ժամանել այլ նպատակով՝ մասնակցելու աֆրիկա-ասիական համաժողովին[11]:

Պետության վերակազմակերպման գործում Սադաթն անմիջապես անցավ նոր օրենքների ստեղծմանն ու կիրառմանը: Դրանք վերաբերում էին ընդհանուր հաստատություններին և պետականացված ընկերություններ

[7] Արև, 11.I.1971:

[8] Հայ-սփյուռք հանրագիտարան, Ե., 2003, էջ 154: Այս շրջանի եգիպտահայ հա-մայնքի մասին գրականության բացակայության պատճառով հիմնականում օգտագործվել է եգիպտահայ պարբերական մամուլը:

[9] Արև, 15.I.1971:

[10] Հուսաբեր, 9VI.1971:

[11] Զահակիր, 13.I.1972:

րին, վերջիններիս ծրագիր-կանոնագրին և պաշտոնավարողներին, կենսաթոշակներին, ինչպես նաև հանրապետության նախագահի, ազգային խորհուրդների, նախարարների խորհրդի և նախարարությունների, տեղական իշխանությունների գործառույթներին ու վերակազմակերպմանը[12]:

Սադաթի նախագահության հենց առաջին տարիներին եգիպտահայ ազգային իշխանությունները կարողացան հաջողություն արձանագրել՝ կապված ազգապատկան հողերը վերադարձնելու հետ, ինչը փաստում են Կահիրեի առաջնորդարանի հաղորդագրությունները: Առաջին հաղորդագրությունը կրում էր «Ազգապատկան հողերու հարցին բարուոք լուծումը» խորագիրը. այնտեղ հիշատակվում է Հողային բարեկարգության նախարարության հրատարակած՝ 1952 թ. թիվ 178 օրենքը, որի համաձայն՝ 1961 թ. առաջնորդարանին պատկանող երկրագործական հողերը ժամանակավոր գրավման էին ենթարկվել[13]: Այդ թվականից ի վեր ազգային իշխանությունները մեծ ջանքեր գործադրեցին, որի շնորհիվ ազգայնացումից զերծ մնացին ազգային բարերարներ Կարապետ Գալուստի և Գրիգոր Եղիայանի կտակած կալվածքները՝ ի նպաստ կրթական նպատակների: Մյուս հողերը շարունակում էին մնալ գրավման տակ: Այս իրավիճակում 1971 թ. փետրվարի 1-ին Հողային բարեկարգության նա-խարարության Շիրպինի գրասենյակը վերջնական գրավման վճիռ է արձակել Հեսասի ազգապատկան 11 ֆեդդան հողամասի համար: Նկատի ունենալով, որ դրանով ազգային առաջնորդարանը զրկվում է տարեկան խոշոր եկամտից, Թեմական և Քաղաքական ժողովները սկսեցին գումարել բացառիկ համատեղ նիստեր, հղեցին դիմումներ պետական բարձրաստիճան պաշտոնյաներին և բարձրագույն մարմիններին, ինչի շնորհիվ՝ շուրջ մեկ ամիս գործադրած համառ գործողություններ իրականացնելով՝ հաջողվեց հետ ստանալ վերոհիշյալ հողամասը, և այս ամենը, անշուշտ, Եգիպտոսի իշխանությունների բարյացակամ վերաբերմունքի արդյունքն էր[14]: Մինչ այդ Հողային բարեկարգության նախարարությունը խորհրդարանի վավերացմանը ներկայացնելու համար օրենքի նախագիծ էր պատրաստել, որով հայապատկան հողերի համար աննպաստ պայմաններ էին առաջադրվում: Սա ևս հանգեցրեց ազգային իշխա-նությունների կողմից խնդրագրեր և հուշագրեր հղելուն՝ ուղղված նախարարների, պետական բարձրաստիճան պաշտոնյաների, որոնց հետ տեղի էին ունենում նաև տեսակցություններ: Այս բոլոր աշխատանքները, բարեբախտաբար, պսակվեցին հաջողությամբ, և խորհրդարանի վավերացրած ու նախագահի ստորագրած՝ Հողային բարեկարգության նախարարության 1971 թ. թիվ 35 օրենքը ընդմիշտ լուծեց եգիպտահայ համայնքի ազգային իշխանությունների՝ տարիների մղձավանջը դարձած հողային հարցը, որի համար հայերը պարտական են այդ ժամանակվա կառավարությանը և նախագահ Անվար ալ-Սադաթին: Ի պատասխան եգիպտական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքի՝ համայնքի ազգային իշխանություններն ամեն կերպ սատարում էին Սադաթին ու երկրի կառավարու-

[12] Արև, 24.IX.1971:
[13] Նույն տեղում, 21.VII.197:
[14] Նույն տեղում, 19.IX.1971:

թյանը, ինչը փաստում են պաշտոնական հաղորդագրությունները: Իսլամական «Էլ Ատհա» տոնի առիթով Եգիպտոսի Արաբական Հանրապետության նախագահ Սադաթին գաղութի ուղարկած շնորհավորական հեռագրում ասված է[15].

«Ն. Վ. Մոհամետ Անուար էլ Սատաթ
Նախագահ Եգիպտոսի Արաբ Միացեալ Հանրապետութեան
Գահիրե

Էլ Ատհայի տօնին առիթով, ի դիմաց Հայ Օրթոտոքս համայնքի հայրենասէր զաւակներուն և մեր ժողովներուն, ինչպէս նաեւ անձնապէս, կը ներկայացնենք ջերմ շնորհաւորութիւնները, աղօթելով Բարձրեալն Աստուծոյ, որ Ձեզ շնորհէ առողջութիւն և երկար կեանք, որպէսզի Ձեր գործակիցներուն հետ կարողանաք վերջնական յաղթանակը տանիլ և երկիրը առաջնորդել աւելի բարօր և բարգաւաճ վիճակի:

Զաւէն եպս. Չինչինեան
Առաջնորդական Տեղապահ Հայոց Եգիպտոսի
Դիւան Գահիրէի Ազգային առաջնորդարանի»:

Եվ իզուր չէ, որ ազգային իշխանությունները 1976 թ. պաշտպանեցին Սադաթի վերընտրությունը, ինչն իր փաստաթղթային ձևակերպումը ստացավ նախագահին ուղղված հեռագրի մեջ[16]:

Եգիպտահայ համայնքի ղեկավարությունը գործադրում էր իր բոլոր ուժերը, որպեսզի այն պահեր «էջմիածնական» ուղու վրա: 1972 թ. Կա-հիրեի թեմական մասնակի ընտրություններից հետո «Միացյալ ազգային ճակատի» (Հնչակ-Ռամկավար–Չեզոք) թեկնածուները հաղթանակ տարան «Համերաշխասերների ճակատի (Դաշնակ-Չեզոք) թեկնածուների նկատմամբ[17]: Այս մասնակի ընտրությանը վերաբերող հոդվածում «Զահակիրը» գրում է. «Յստակ ըլլալու համար շեշտենք, որ սփիւռքի ամեն հայ համայնք իր եկեղեցիով՝ կապուած է Ս. Էջմիածինի և ազգային կապերով Մայր հայրենիքին: Այն բոլոր հայ համայնքները, որոնք կը փորձեն խզուիլ այս երկու նուիրականութիւններէն, անպայման կորստեան և անհետացման դատապարտուած կ'ըլլան»[18]:

1970-ական թթ. կեսին Եգիպտոսի մեջ հայերն իրականացրել են կրթական, մշակութային ու հասարակական ազատ գործունեություն: Այդ տարիներին եգիպտահայերը փորձում էին կապող օղակ դառնալ Հայաստանի և Եգիպտոսի միջև որոշակի հարաբերություններ ձևավորելու գործում: 1975 թ. Ալեքսանդրիայի ազգային իշխանությունների քաղաքական ժողովի ատենապետ Վահան Ալեքսանյանը իր բնակարանում ընդունելություն է կազմակերպել՝ ի պատիվ Խորհրդային Հայաստանի լուսավորության նախարար Սիմոն Հախումյանի, որին ներկա են գտնվել քաղաքի կառավարիչ Աբդել Թավաբ Հոթայեբը, Ալեքսանդրիայի կրթության փոխնախարար Ֆահմի Քաբրը, Ալեքսանդրիայում խորհրդային հյուպատոս Յուրի Սուսլիկովը, Կահիրեի կրթական նախարարության ար-

[15] Զահակիր, 18.I.1973:
[16] Հուսաբեր, 16.IX.1976:
[17] Նույն տեղում, 11.V.1972:
[18] Զահակիր, 4.V.1972:

տաքին հարաբերությունների տնօրեն Մահմուդ Ալին, եգիպտահայ համայնքի առաջնորդ Զավեն եպ. Չինչինյանը և այլ բարձրաստիճան այրեր[19]: Ի պատասխան Վ. Ալեքսանյանի կողմից երկրի նախագահին ուղղված դրվատանքի խոսքերի՝ Ալեքսանդրիայի կառավարիչը իր ելույթում հայերին ներկայացրել է որպես Եգիպտոսի պատվավոր և աշխատասեր քաղաքացիներ: 1970-ականը բեկումնային ժամանակաշրջան էր նաև եգիպտահայ համայնքի ներքին իշխանական օղակների համար: 1973 թ. եգիպտահայ թեմը մնաց անգլուխ, քանի որ սրբազան Զ. Չինչինյանը որոշակի հանձնարարություններով մեկնեց ԱՄՆ[20]: Մինչև նոր առաջնորդի ընտրությունը առաջնորդական տեղապահությունը ստանձնեց Ներսեհ վրդ. Բապուճյանը: 1977 թ. հունվարի առաջնորդական ընտրությանը դրված էր ինչպես տեղապահ Բապուճյանի, այնպես էլ Չինչինյանի թեկնածությունը, ինչը դժվարին կացության մեջ էր դրել եգիպտահայ համագումար ժողովին: Խնդիրն այն էր, որ առաջնորդական ընտրություններից անմիջապես հետո հայր սուրբն անմիջապես դադարում էր տեղապահ լինելուց[21], և քանի որ Չինչինյանը արտասահմանում էր, ընտրողների մի մասի կարծիքով, նա չպետք է սպասեր քաղաքական ժողովի կողմից ընտրության արդյունքների վավերացմանն ու անհապաղ պետք է վերադառնար Եգիպտոս: Թեև Չինչինյանի թեկնածությունը պաշտպանում էր վեհափառ Վազգեն Ա-ն, եգիպտահայ համագումար ժողովի անդամների մի մասը՝ Պերճ Թերզյանի և Արթո Պլքթանյանի գլխավորությամբ, գտնում էր, որ Զ. Չինչինյանն ընտրվելու դեպքում և կառավարության վա-վերացումից հետո կլիներ առաջնորդ, որն ընտրված էր, բայց արտասահ-մանում, և տեղապահ էր, որն այլևս պաշտոն չուներ: Վերջապես այս բուռն բանակցությունների շնորհիվ ժողովի անդամները եկան եզրակացության, որ, այնուամենայնիվ, քվեարկությունը պետք է իրականացնել: Սրբազանը ստացավ 30, իսկ հայր սուրբը՝ 15 քվե: Ժողովականները ծափահարություններով ընդունեցին եգիպտահայ թեմի նոր առաջնորդ Զ. եպ. Չինչինյանի ընտրությունը[22]: Ինչ վերաբերում է առաջնորդական տեղապահ Ներսեհ վրդ. Բապուճյանին, որին թեմը ղեկավարելու 4 տարիների ընթացքում հաջողվեց եգիպտահայ համայնքի քաղաքական տարբեր հոսանքների միջև համերաշխություն հաստատել, նա հրաժարվեց մնալ եգիպտահայ թեմում և մեկնեց Ֆրանսիա: Եգիպտահայերը մեծ հուզմունքով նրան հրաժեշտ տվեցին, ինչի մասին փաստում են նրա պատվին Ալեքսանդրիայի ազգային իշխանությունների կազմակերպած հրաժեշտի պատարագը և ողջերթի ընդունելությունը[23]:

Եգիպտահայ ռամկավար, դաշնակցական և հնչակյան կուսակցական թևերին համայնքի այս դժվարին կացությունը ստիպեց բռնել համագործակցության ուղին: Այս կուսակցությունների համապատասխան պաշտոնաթերթերի՝ «Արևի», «Հուսաբերի» և «Զահակիրի» միջև սկսվեց

[19] Հուսաբեր, 13.III.1975:
[20] Արև, 1.II.1977:
[21] Նույն տեղում, 31.I.1977:
[22] Նույն տեղում, 2.II.1977:
[23] Նույն տեղում, 2.VII.1977:

համագործակցության և փոխըմբռնման գործընթաց, որը համակված էր համայնքին ծառայելու նվիրական պարտականության գիտակցությամբ՝ նկատի ունենալով ազգային ու համայնքային շահերը: Անտեսելով երբեմնի կուսակցական վեճերը՝ տարբեր միջոցառումներին կարելի էր տեսնել նախկին հակամարտ «ճակատների» ներկայացուցիչների՝ նստած իրար կողքի, որոնք միասնաբար խաղաղ գործակցության կոչ էին անում[24]: Սրա վառ ապացույցը եղավ այն, որ 1979 թ. նոյեմբերի 11-ի՝ Կահիրեի թեմական մասնակի ընտրությունները տեղի ունեցան համագործակցական ցանկով[25]:

1980 թ. Եգիպտոսի սահմանադրության մեջ կատարված փոփոխությունները եգիպտահայ համայնքի վարչական մարմիններին թույլ են տվել եգիպտական իշխանությունների իրավասության ոլորտից դուրս բերել լուսավորության և համայնական հողերի հարցերը[26]:

Եգիպտոսի հայ համայնքի պատմական այս շրջանն ավարտվեց 1981 թ. հոկտեմբերի 6-ին, երբ Կահիրեի արվարձանում ռազմական շքերթի ժամանակ «ալ-Ջիհադ ալ-Ջադիդ» ծայրահեղ իսլամական խմբավորման անդամները սպանեցին Եգիպտոսի նախագահ Սադաթին[27]:

Սփյուռքահայ տեղաշարժը իր ցավագին հետևանքներով ազդել է Եգիպտոսի հայ համայնքի տնտեսական վիճակի, ազգային հաստատությունների և, բնական է, հոգեբանական դրության վրա՝ համայնքի առաջնորդներին և գործիչներին մտածելու տեղիք տալով: Այս մասին է փաստում սփյուռքահայության վերաբերյալ տարբեր հոդվածների և աշխատությունների հեղինակ Անդրանիկ Անդրեասյանը, որը Նասերի գլխավորած հեղափոխությունից մինչև 1970-ական թվականների վերջն ընկած 25 տարիների ընթացքում վեց անգամ այցելել էր Կահիրե, Հելիոպոլիս և Ալեքսանդրիա, այնտեղ ուներ գաղափարակից ընկերներ ու համախոհ բարեկամներ, որոնց հետ շրջում էր հայկական հաստատություններում, լինում առաջնորդարանում, դպրոցներում, ակումբներում և հանդիպումներ ու զրույցներ ունենալով տեղի հոգևոր հայրերի, ուսուցիչների, աշակերտների ու վարիչ պաշտոնյաների հետ՝ ծանոթ էր համայնքի հոգսերին և դրանց առնչվող ծրագրերին: Ներկա լինելով հրապարակային հանդեսներին և կազմակերպական ժողովներին՝ Անդրեասյանը գրում է. «Մինչ կը խօսէի բեմէն, նաեւ տխրօրէն կը չափէի պարապը թանկագին անձերու, որոնք խլուած էին մահէն, կամ մեկներ էին հեռաւոր ափերու խոստումներուն: Եւ ես հիմա անոնց կը հանդիպէի Պարիզի ու Լոնտոնի, Մոնթրէալի ու Թորանթոյի, Պոստոնի եւ Նիւ Եորքի, Տիթրոյթի եւ Լոս Անճելըսի մէջ, խանդավառ ու հայրենասէր աղջիկներ ու տղաք, որոնք առաջնորդող դերեր կը կատարեն իրենց համայնքներուն վերապրումի պայքարին բոլոր ասպարէզներուն վրայ»[28]:

---

[24] Պայքար, 6.I.1979:
[25] Արև, 7.XI.1979:
[26] Հայ-սփյուռք հանրագիտարան, էջ 154:
[27] **Игнатенко А. А.,** *Халифы без халифата, М., 1988, с.. 6.*
[28] Պայքար, 5.I.1979:

Կահիրեի և Ալեքսանդրիայի հայկական իշխանությունները և այնտեղի արվեստագետներն ու մտավորականները ամեն կերպ ջանում էին համայնքը պահել կենսական վիճակում և փրկել վերահաս աղետից: Ինչպես նշում է Ա. Անդրեասյանը, այդ ճիգերը համադրելու և դժվարին կացության համար ելք գտնելու գործում նշանակալի դեր էր կատարում «Արև» օրաթերթի խմբագրությունը: Գետնահարկի խմբագրատունը և վերնահարկի Գեղարվեստասիրաց սրահն ու հարակից բաժինները, ինչպես նաև Ալեքսանդրիայի նորակառույց ու գեղակերտ «Տիգրան Երկաթ» կենտրոնը շարունակում էին իրենց մշակութային գործունեությունը՝ մնալով մտավորական զրույցների, ժողովների և մշակութային ձեռնարկների կենտրոնավայրեր: Չնայած Եգիպտոսի իշխանությունների, մասնավորապես Սադաթի հայանպաստ քաղաքականությանը՝ հայերը շարունակում էին արտագաղթել, ինչին խթանեց 1970-ական թթ. վերջին և 1980-ական թթ. սկզբին պետության ներքաղաքական իրավիճակի կտրուկ սրումը: Այդ ժամանակահատվածում երկրի ներսում տեղի են ունեցել ընդհարումներ մահմեդականների և ոչ մահմեդականների միջև[29]: Հայերը պահպանել են չեզոքություն, սակայն նրանց արտահոսքը չի դադարել: Եթե 1950-ականին տեղի հայությունը շուրջ 45000 մարդ էր, ապա երեք տասնամյակ անց՝ 1980 թ., կազմում էր շուրջ 10000 հոգի[30]: Չնայած դրան՝ Կահիրեի և Ալեքսանդրիայի հայ համայնքները շարունակում էին իրենց ճիգերը լարել համայնքի կենսականությունը պահպանելու համար:

АРМЯНСКАЯ ОБЩИНА ЕГИПТА В 1970-1981 ГОДАХ

ХАЧАТРЯН А. М.

Резюме

Годы президентства Садата (1970-1981) стали переломным этапом в развитии Египта и, в частности, для социально-культурного развития армянской общины. Проводимая президентом Садатом политика “открытых дверей”, предотвратив эмиграцию армян из Египта, способствовала стабилизации экономического положения армян. Однако обострение внутриполитической ситуации в стране (столкновения между мусульманским и немусульманским населением) и напряженная внешнеполитическая обстановка спровоцировали волну эмиграций, в результате которых в 1980 г. численность населения египетской армянской колонии ощутимо сократилась, насчитывая всего лишь 10000 чел., в то время как в 1950-ых годах она составляла 45000 человек.

---

[29] *Հայ-սովյուռք հանրագիտարան, էջ 154:*

[30] **Մելքոնյան Է. Լ.,** *Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Ե., 2005, էջ 454: Մեկ այլ տեղ «Արև» օրաթերթի խմբագիր Ավետիս Յափուճյանը եգիպտահայերի թիվը 1979 թ. հաշվում է մոտ 8000 (Սովետական Հայաստան, 1979, N 1):*